ՊԱՅՄԱՆԱԳԻՐ

ք. Վարդենիս 01.09.2021թ.

Խաչաղբյուրի միջնակարգ դպրոց (այսուհետ Կողմ 1)/, ի դեմս տնօրեն Աննա Դանիելյան, որը գործում է իր կանոնադրության հիման վրա մի կողմից և Վարդենիսի Բժշկա-հումանիտար քոլեջ ՍՊԸ (այսուհետ Կողմ 2), ի դեմս տնօրեն Նիկողոս Գասպարյանի, գործող կանոնադրության հիման վրա, մյուս կողմից, կնքեցին սույն պայմանագիրը հետևյալի մասին:

1.ՊԱՅՄԱՆԱԳՐԻ ԱՌԱՐԿԱՆ

1.1. Կողմ 1-ը պարտավորվում է ուսանողների պրակտիկ պարապմունքները կազմակերպելու համար Կողմ 2-ին տրամադրել դպրոցի գրադարանի տարածք՝ ըստ նախօրոք համաձայնեցված և հաստատված գրաֆիկի:

1.2.Պայմանագիրը գործելու է 01.09.2021թ-ից մինչև 01.09.2024թ-ը:

2. ԿՈՂՄԵՐԻ ԻՐԱՎՈՒՆՔՆԵՐԸ ԵՎ ՊԱՐՏԱԿԱՆՈՒԹՅՈՒՆՆԵՐԸ

2.1. Կողմ 1-ը ծառայությունները մատուցում է պատշաճ որակով:

2.2.Կողմ 2-ը պարտավորվում է խնամքով վերաբերվել գրադարանի տարածքի և գույքի նկատմամբ, փոխհատուցել իր մեղքով հասցված վնասը:

2.3.Կողմ 1-ը թափուր աշխատատեղեր ունենալու դեպքում, Կողմ 2-ին տրամադրում է տեղեկություն թափուր տեղի վերաբերյալ, իր պատրաստած լավագույն ուսանողներին առաջնահերթ աշխատանքի տեղավորելու համար:

2.4.Կողմ 2-ն իրավունք ունի սույն պայմանագրի 1.1 կետի համաձայն իրեն տրամադրվող համապատասխան տարածքը օգտագործել ուսանողների պրակտիկաները պատշաճ մակարդակով անցկացնելու համար:

3. ԿՈՂՄԵՐԻ ՊԱՏԱՍԽԱՆԱՏՎՈՒԹՅՈՒՆԸ

3.1. Սույն պայմանագրով սահմանված պարտականությունները չկատարելու դեպքում կողմերը պատասխանատվություն են կրում ՀՀ գործող օրենսդրության համապատասխան:

4. ԵԶՐԱՓԱԿԻՉ ԴՐՈՒՅԹՆԵՐ

4.1.Սույն պայմանագիրն ուժի մեջ է մտնում ստորագրման պահից և գործում է մինչև պայմանագրով ստանձնած պարտականությունների պատշաճ կատարումը:

4.2. Սույն պայմանագրի նկատմամբ ցանկացած փոփոխություն և լրացում վավեր է այն պայմանով, եթե դրանք կատարված են գրավոր և ստորագրված՝ Կողմերի լիազոր ներկայացուցիչների կողմից: Սույն պայմանագրի նկատմամբ հետագայում ստորագրված հավելվածները կլինեն դրա անբաժանելի մասը:

4.3. Սույն պայմանագրի լուծելու և դադարելու հիմքերը որոշվում են ՀՀ գործող օրենսդրությամբ:

4.4. Սույն պայմանագիրը կազմված է հայերեն լեզվով, երկու օրինակից, յուրաքանչյուր կողմին տրվում է մեկական օրինակ:

5. ԿՈՂՄԵՐԻ ԻՐԱՎԱԲԱՆԱԿԱՆ ՀԱՍՑԵՆԵՐԸ ԵՎ ԲԱՆԿԱՅԻՆ ՎԱՎԵՐԱՊԱՅՄԱՆՆԵՐԸ

ԿՈՂՄ 1	ԿՈՂՄ 2
Խաչաղբյուրի միջնակարգ դպրոց	«Վարդենիսի բժշկա-հումանիտար քոլեջ»
Հ/Հ 900158000332 ԱԿԲԱ բանկ	ՀՎՀՀ 08212216
ՀՎՀՀ 08803205	Հասցե՝ Վ. Համբարձումյան 19
Հասցե՝ Գեղարքունիքի մարզ, գ.	Հ/Հ 11500529026300
Խաչաղբյուր, 1-ին փողոց, 49 շենք	Հեռ. 098 707008
Հեռ. 093 106100	e-mail vardenisi-bhq@rambler.ru
e-mail xachaxbyur2019@mail.ru	
Տնօրեն՝ Ա. Դանիելյան	Տնօրեն՝ Ն. Գասպարյան